ՍՆՈՒՆԴԸ ՈՐՊԵՍ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԲԱՂԱԴՐԻՉ

Գոհար Սարգսյան

Սննդի համակարգը կապված է ծեսի, պաշտամունքի, տոնի հետ և օժտված է սակրալ բնույթով, իսկ ծեսի կրոնագաղափարական բովանդակությունը ավանդույթի պահպանումն է, դրա փոխանցում-հանձնումը սերնդից սերունդ, որը նպաստում է ազգային պատկանելության որոշարկմանը, միավորում է ազգի գենետիկ հիշողությունը: Ժամանակակից փոխակերպվող հասարակության մեջ սնունդը, ճաշկերույթը, խնջույքը կմնա իբրև հաղորդակցական կարևոր հանգույց, միավորող գործոն, ինչպես նաև ծեսերի ու սովորույթների միջոցով կապող օղակ կլինի ներկա ժամանակի և այս կամ այն էթնոսի գենետիկ, ընտանեկան հիշողության մեջ:

Հասարակության պատմության մեջ սննդի կրոնադիցաբանական և պատմամշակութային ասպեկտների ուսումնասիրությանն են նվիրված կրոնական, ազգագրական, պատմական բազմազան աշխատանքներ: Դրանք վկայում են, որ բոլոր մշակույթներում սնունդը կրոնածիսական ամբողջական համալիրի բաղկացուցիչ մաս է, որին առնչվում են տարատեսակ հավատալիքներ, կրոնական պատկերացումներ և խորհրդանշաններ: Ինչ վերաբերում է դրա կիրառական նշանակությանը, ապա այն բազմազան և տարատեսակ գիտելիքներ է հաղորդում տվյալ ժողովրդի աշխարհայացքի, բարքերի, ավանդույթների, ծեսերի, կրոնական սիմվոլների, վարվելաձևի, գեղագիտության վերաբերյալ:

Կրոնադիցաբանական տարբեր համակարգերում սնունդն ունեցել է իր ուրույն տեղն ու դերը, բազմաբնույթ դրսևորումները, ստացել է տարատեսակ մեկնաբանություններ, դարձել պաշտամունքի, ծեսի առանցքային բաղադրիչ և մշակույթի մաս:

«Սնունդ» համակարգը, ճաշկերույթը լոկ սննդի օգտագործում չէ: Այն հոգևոր և հասարակայնացված շփման ձև է՝ օժտված հաղորդակցական, ինտեգրող և միավորիչ գործառույթերով:

Կրոնական հավատալիքների և գաղափարների զարգացմանը զուգահեռ մարդը սննդին սիմվոլիկ բովանդակություն է հաղորդել: Սնունդը

բնությունից մշակույթի անցման հետևանք է, մշակույթի արդյունք, ուստի որոշակի սննդատեսակներ կրոնա-դիցաբանական կոդի արժեք են ձեռք բերում, որոնց վերագրվել են գերբնական հատկություններ:

Անտիկ աշխարհի ժողովուրդների դիցաբանական մտածողությունը օժտված է եղել վառ երևակայությամբ, որի շնորհիվ էլ ստեղծվել ու տարածվել են առասպելական զրույցներ, որոնց հիմքում ընկած են ոչ միայն մարդկանց կրոնական հավատալիքները, այլև կենցաղը, նիստուկացը, ավանդույթները, կյանքի պայմանները: Այդ առասպելներն ու զրույցները հիմնականում աստվածների ու գերբնական ուժերի մասին են, սակայն կարևոր տեղեկություններ են տալիս նաև մարդկանց աշխարհայացքի, ապրելակերպի ու սովորույթների մասին:

Առասպելներում սնունդը սերտորեն առնչվում է նաև մահվան ու կյանքի մոտիվների հետ, որոնք հատկապես դրսևորվում են *զոհաբերություն* երևույթի մեջ, որի իմաստը ոչնչացնելու, սպանելու, անդամահատելու միջոցով, որպես դրանց փոխհատուցում, արգասաբերություն, լիառատություն, կյանքի զարթոնք ստանալն էր: Մարդու ձգտումն անմահության, մշտապես երիտասարդ մնալու նրա երազանքը նույնպես կապվել է սննդի առասպելական ընկալումների հետ: Որոշակի սննդատեսակներ դիտվել են որպես մարդու նորմալ կենսագործունեության նախապայման, որպես աստվածային սնունդ: Նոր կենսական ուժեր ստանալու, կարևոր ձեռքբերումներ ունենալու համար էլ մարդիկ դիմել են զոհաբերությանը, որի արդյունքը պիտի լիներ նոր կյանքի ծնունդը, մահվանից հետո հարությունը: Մատուցվող զոհը սնունդ էր աստվածների համար, և դրանով կարելի է բացատրել գործառութային զուգորդումները սննդի և զոհաբերության միջև: Այդ զուգորդումների դրսևորումներն են *սնունդ - զոհ, սեղան - զոհասեղան* (խորան), *սփռոց - վարագույր* (խորանը, զոհասեղանը փակող ծածկոց), *սեղանի սպասք - զոհաբերության գործիքներ, խոհարար - քուրմ* նույնականացումները[1]: Դիցաբանական երևակայությամբ ողողված մտածողության մեջ շատ հաճախ զուգահեռներ են անցկացվում զոհասեղանի և ընտանեկան օջախի միջև, ընտանիքի և համայնքի միջև, ընտանիքի հոր և քրմի միջև:

Սննդի, ինչպես նաև զոհաբերված կենդանու մսի ճաշակման արարողությունը յուրօրինակ հաղորդակցում էր մարդու և աստվածների,

---

[1] **Мифы народов мира**, т. 1, М. 1987, ст. 247.

մարդու և ցեղի տոտեմի միջև, տեղի էր ունենում հոգևոր-կրոնական մակարդակում նրանց նույնականացում ու միաձուլում, ինչն էլ հանգեցնում էր նոր ներդաշնակության ու ներքին միասնության, լավատեսության ու հզորության ամրապնդման: Զոհաբերությանը մշտապես հաջորդել է տոնախմբությունը՝ զոհաբերված մսի ճաշակումը, որը ունեցել է ինքնատիպ արարողակարգային միավորիչ գործառույթ տոհմի անդամների և տոտեմ-աստվածության միջև, եղել է կրոնական պարտականություն, պաշտամունքի բաղադրիչ: Այդ հրապարակային ճաշկերույթը բովանդակում էր միասին ուտել-խմելու, միասին մեկ ամբողջականություն լինելու կարևորագույն գաղափարը:

Կենդանական սննդի զոհաբերումը ավելի հին պատմություն ունի. բուսական սնունդը նախատեսված էր միայն աստվածների համար: Սկզբնական շրջանում զոհաբերված կենդանու արյունը համարվել է սրբազան հեղուկ, այն խմել են, իսկ հետագայում արյանն արդեն փոխարինել է գինին՝ համարվելով «որթատունկի արյուն»[1]:

Կենդանիները դիցաբանության մեջ բացառիկ մեծ դեր ունեն: Դա պայմանավորված էր մարդկության զարգացման վաղ փուլում կենդանիների ունեցած դերով, երբ կենդանիները դեռ հստակ տարանջատված չէին մարդկային կոլեկտիվներից: Կարևոր հանգամանքներից էր նաև այն, որ մարդկանց կարծիքով իրենք առաջացել են տոտեմական ինչ-որ կենդանուց, կենդանի-նախնուց: Տոտեմը տոհմի նախնական աստվածությունն էր, որը տվյալ հանրությանը կապել է տվյալ տարածքին, ներկան՝ անցյալին, մշակութային-սոցիալականը՝ բնությանը: Այս առանձնահատկությամբ էլ կենդանիները երկար ժամանակ եղել են մարդկային հասարակության և բնության ամբողջությունը ներկայացնող որոշակի մոդել: Կենդանիներով են կոդավորվել օրերը, ամիսներն ու տարիները: Կենդանիների միջոցով նախնադարյան մարդը բացատրել է շրջակա միջավայրի, բնության, նաև իր գոյության առեղծվածները: Նախնադարյան մարդու աշխարհայացքի հայեցողական միջուկը՝ պտղաբերությունը, կապվում է արական-իգական սկզբի հետ, և հենց դա էլ ընկած է կենդանակերպ կոդի հիմքում և իր դրսևորման տարատեսակություններն է ունեցել տարբեր ազգերի դիցարաններում:

Ծեսերում ու հավատալիքներում հաճախակի հանդիպող և յուրահա-

---

[1] Տե՛ս **Зигмунд Фрейд,** Тотем и табу, М., 2015, ст. 185.

տուկ խորհրդանշային վերաիմաստավորում ստացած կենդանիներից է **ոչխարը**, որը պաշտամունքի անփոխարինելի մասնակիցն է, զոհաբերության ծեսի հիմնական բաղադրիչը, որը տարբեր կերպավորումներով (գառ, խոյ) հանդիպում է տարբեր ժողովուրդների հավատալիքներում:

Զոհաբերությունը աստվածներին, ոգիներին, հերոսներին մատուցվող նվիրատվությունն է: Այն առաջացել է նախնադարյան հասարակության մեջ, երբ որսորդներն իրենց որսի լավագույն մասը թողնում էին հովանավորող ոգիներին: Հետագայում, երբ ձևավորվում են կրոնական ծեսերը, զոհաբերությունը զարգացում է ունենում և ենթարկվում որոշակի կանոնների. զոհի մի մասը նվիրում էին նրան, ում համար կատարվում էր զոհաբերությունը, մի մասը՝ քրմերին, իսկ մնացածը՝ մասնակիցներին: Զոհաբերության մսից պատրաստված ճաշը բոլորին բաժանվում էր հավասար չափաբաժիններով: Այն տեղը, որտեղ կատարվում էր զոհաբերությունը, կոչվում էր զոհարան, և հենց այդտեղ էլ աստվածներից ու ոգիներից խնդրում էին բարիք կամ շնորհ՝ փոխարենը խոստանալով զոհ մատուցել: Զոհի միջոցով մարդիկ փորձում էին մեղմել բնության կողմից մարդկանց պատուհասած արհավիրքները: Զոհաբերության հետ անմիջականորեն կապվում է մատաղի գաղափարը: Մատաղ բառը ստուգաբանվում է որպես “մատո՛ աղ», այսինքն՝ զոհաբերվող կենդանիներին աղ էին կերցնում[1]:

Ե՛վ հույները, և՛ հռոմեացիները, և՛ հայերը զոհաբերվող կենդանիներին զարդարում էին գեղեցիկ պսակներով, ժապավեններով, ցուլերի և կովերի եղջյուրները ոսկեզօծում էին: Վարդան վրդ. Հացունին այս առնչությամբ հիշատակում է ինչ է հաղորդում Ագաթանգեղոսը. «Տրդատայ հայրը՝ դիցապաշտ Խոսրով եւս իւր զոհելի անասունքը կը սքողէ ոսկեղեն եւ արծաթեղեն զարդուք»[2]: Զոհաբերություն է կատարվել նաև Զատկի տոնին, որը քրիստոնեական տոների մեջ ամենանշանավորներից է: Զատկին զոհաբերվող կենդանին տարեկան ոչխար էր, որն օրհնվում և մորթվում էր եկեղեցում[3]: Ընդունված սովորություն էր, որ զոհաբերվող կենդանուն ոչ մի հարված չէին հասցնում, մինչև նա չխոնարհեր վիզը:

---

[1] Տե՛ս **Հ. Վարդան վ. Հացունի,** Ճաշեր եւ խնճոյք հին Հայաստանի մեջ, Վենետիկ-Ս.Ղազար, 1912, էջ 345:

[2] Տե՛ս **Հ. Վարդան վ. Հացունի,** նշվ. աշխ., էջ 344-345:

[3] Տե՛ս **նույն տեղում**, էջ 378:

Սա կարծես կենդանուն հասցվող տանջանքի մեղքից ազատվելու հոգեբանական պաշտպանիչ մի քայլ էր՝ պայմանավորված կրոնական հոգեբանությամբ և դիցաբանական մտածողությամբ:

Զոհաբերություններում օգտագործվող կենդանիներից հիմնականում առանձնացվում է ոչխարը՝ որպես հիմնական զոհի կերպար: Ոչխարը տարբեր դիցաբանական համակարգերում տարբեր խորհրդանիշների հետ է կապվում: Գլխավորապես այն խորհրդանշում է հեզություն, ամոթխածություն, համբերատարություն, պարզություն, անմեղություն, սեր, սակայն երբեմն նաև բացասական ուղղվածություն է ստանում՝ դառնալով հիմարության, համառության խորհրդանիշ: Սև ոչխարը զոհաբերվում էր ստորերկրյա աշխարհին ու չար ուժերին:

Այսպիսով, մեծ է ոչխարի դերը բոլոր ժողովուրդների ծեսերում. հին հրեաների մոտ ոչխարը տոտեմ կենդանի էր, Եգիպտոսում այն զոհել են Ամոն խոյագլուխ աստծուն, այստեղ ոչխարի պաշտամունքը բազմազան էր, տարբեր տաճարներում կային սրբազան ոչխարներ:

Այսպիսով, ակնհայտ է այն օրինաչափությունը, որ նույն խորհրդանիշը գոյություն ունի և՛ առասպելներում, և՛ ժողովրդական ծեսերում: Թեև ծեսի հիմքում շատ դեպքերում կարող է առասպելն ընկած լինել, այնուամենայնիվ, առասպելի և ծեսի միջև կան սահմաններ, որոնցով էլ դրանք հստակ տարբերակվում են: Այդ առումով շատ կարևոր ու անուրանալի է Ջ. Ֆրեզերի գիտական հսկայական վաստակը: Մեծանուն գիտնականը կարողացել է ճիշտ և հստակ ներկայացնել հնագույն ծեսերն ու պաշտամունքային արարողությունները՝ իրավացիորեն նկատելով, որ, չնայած հավատալիքների բազմազանությանը, երևույթի տարբեր ընկալումներին, մարդկանց մոտ ձևավորվում են մեկ միասնական կրոնական պատկերացում և ծեսի միանման արարողակարգ, ինչպես, ասենք, բերք ստանալու համար հողագործությանը հովանավորող աստվածներին նվիրված ծեսերը, աստվածներին ուղղված աղոթքները և այլն: Ուսումնասիրելով եգիպտական Օսիրիսի պաշտամունքը՝ Ջ. Ֆրեզերը բացահայտում է առասպելի և ծեսի սերտ կապը, համադրում դիցաբանական մոտիվները սովորութային ծեսերի, մարդկանց նյութական գործունեության հետ, ցույց տալիս առասպելի ներկայությունը ծեսերում, ինչպիսին է օրինակ մեռնող և հարություն առնող բնության աստվածության կապը ցորենի ցանքսի, աճի հետ[1]:

---

[1] **Ֆրեզեր Ջ.,** Ոսկե ճյուղը, Երևան, 1989, էջ 435:

Առասպելի ու ծեսի զուգակցման, փոխադարձ ներթափանցման օրինակ է Աբրահամի՝ Իսահակին Աստծուն զոհաբերելուն պատրաստվելը և նրան գառով փոխարինելը: Առաջնածին որդիներին Աստծուն նվիրաբերելու դիցաբանական հիմքից աստիճանաբար անցում է կատարվում ժողովրդական ծեսին, նույն կերպ նաև տղաների թլպատման մասին առասպելը աստիճանաբար կապվում է ծեսի հետ՝ դառնալով նաև էթնոտարբերակիչ նշան: Աբրահամի որդուն՝ Իսահակին ոչխարով փոխարինելու պատումը ունի նաև մարդկության պատմության զարգացման մոտիվներ, քանի որ դրանով ցույց է տրվում զոհաբերության ծեսում որպես զոհ մարդկանց փոխարինումը կենդանիներով: Մարդկանց զոհաբերման փոխարինումը զոհաբերվող ոչխարով խորհրդանշում է նաև եղջերափողը, որը հնչեցնում էին անապատով անցնելիս, վտանգի պահերին, թշնամիների հարձակման ժամանակ, Սինա լեռան վրա Աստծու հայտնության ժամանակ:

Ոչխարի կերպարը հայտնվում է նաև այլ առասպելներում: Վեդայական և հինդուական դիցաբանության մեջ կրակի աստված Ագնին նաև ընտանեկան օջախի և զոհաբերության աստվածն է: Ագնին միջնորդ է մարդկանց և աստվածների միջև, որի օգնությամբ կրակի բոցերը երկինք են հասցնում զոհին, իսկ Ագնիի մարմնավորումներից մեկն էլ հենց ոչխարն է[1]:

Եգիպտական հավատալիքներում նույնպես ցուլը, հորթը, կովը կապ-

---

[1] Տե՛ս **Мифы народов мира**, т. 1, ст. 247. Ըստ զրադաշտական դիցաբանական պատումների՝ երկրի առաջին մարդիկ (կին և տղամարդ) սնվում են նախ ջրով, ապա չար ոգու կողմից գայթակղվելով՝ այծի կաթ են խմում, ոչխար են սպանում և խորովելով կրակի վրա՝ ուտում, իսկ ոչխարի մորթուց իրենց համար հագուստ են կարում: Զրադաշտական այս առասպելը աղերսներ ունի հնդկական մի ավանդության հետ, ըստ որի՝ հնդիկները գարնանը, երբ արևը գտնվում էր խոյի համաստեղության մեջ, հանդիսավոր ձևով ոչխար էին խորովում՝ ի պատիվ կրակի և արևի աստված Ագնիի: Ավելին, Ագնին հենց խաչվող փայտերի տեսքով էր պատկերվում, քանի որ աստծու մասին պատկերացումը միաձուլվում է այն առարկայի պատկերացման հետ, որի միջոցով քրմերը վառում էին զոհաբերության կրակը: Փայտերը դասավորվում և վառվում էին հատուկ ձևով՝ ստեղծելով յուրահատուկ կրակարան, որի անունը arani էր, ինչը սանսկրիտից թարգմանաբար նշանակում է *գառ*, իսկ գառը Ագնիի խորհրդանիշն է: Տե՛ս Элиаде М. Очерки сравнительного религиоведения, с. 188, https://bit.ly/3hQRo0F մուտք՝ 05.11.2022թ.

վում են արևի, լուսնի, երկնքի պաշտամունքի հետ: Ոսկե հորթի կերպարի տակ ծագող արևն էր ըմբռնվում:

Այսպիսով, ամենատարբեր կրոններում ցուլի կերպարը կապվում է որոշակի աստվածության հետ: Եգիպտացիների մոտ նա Օսիրիս աստծո մարմնավորումն է, հույների մոտ՝ Զևսի սուրբ կենդանին, Կրետեի Զևսը հենց ցուլերի աստվածն էր, իսկ Զևսի կին Հերան պատկերվում էր կովի գլխով, Պոսեյդոնին նվիրաբերում էին ցուլեր, արևի աստված Հելիոսը ցուլերի 7 հոտ ուներ՝ յուրաքանչյուրը հիսունական գլխով: Հինդուիստների մոտ Շիվան շրջում էր՝ Նանդի ցլի վրա նստած, իսկ Ագնին համարվում էր «հզոր ցուլ»: Հռոմում ցուլը Յուպիտերի սուրբ կենդանին էր, իսկ շումերների և սեմիթների մոտ Աշուր, Ադադ աստվածները ցուլերի վրա նստած էին շրջում երկնքով, աքքադական հավատալիքներում ցուլը կապվում էր լուսնի աստվածության հետ, որի եղջյուրը նույնացվում էր կիսալուսնի հետ: Նոր տարվա կապակցությամբ էլ ցուլ մորթելը խորհրդանշում էր ձմռան մահը և կենսաստեղծ նոր ուժերի ծնունդը:

Այս ամենով հանդերձ՝ պետք է նկատել, որ կենդանիները դիցաբանական մտածողության մեջ միայն աստվածային կերպարների խորհրդանիշ չեն: Նրանք դրսևորվում են նաև իրենց ավելի բնորոշ դերով՝ որպես սննդի աղբյուր: Այդ առումով իրավացի է Ալեքսեյ Լոսևը, երբ գրում է, որ մսային սնունդը միայն ֆիզիկական սնունդ չէ: Այն վերացարկված գաղափար է, որը ներառում է մարդկանց կենսափորձն ու առասպելական պատկերացումները մսային սննդի (կենդանու) վերաբերյալ: Բուսական սննդից անցնելով մսայինի՝ մարդը հիմնավորապես փոխում է իր վերաբերմունքը աշխարհի ու իրերի հանդեպ: Ըստ Ա. Լոսևի՝ “Նա, ով միս է ուտում, ունի բոլորովին այլ աշխարհայացք ու աշխարհընկալում, քան նա, ով միս չի ուտում»[1]:

Կենդանիները դիցաբանության մեջ ոչ միայն սնունդ են դառնում մարդկանց կամ աստվածների համար, այլև հանդես են գալիս որպես սնունդ տվողներ, կյանք ու անմահություն պարգևողներ: Օրինակ՝ Զևսին իր կաթով սնում էր Ամալթեա այծը, ծաղկի նեկտարից պատրաստված մեղրով նրան կերակրում էին նաև մեղուները: Ամալթեա այծի մի եղջյուրից նեկտար էր հոսում, մյուսից՝ ամբրոսիա, իսկ եղջյուրն էլ կոչվում էր «առատության, հարստության եղջյուր»:

---

[1] **Лосев А.**, Диалектика мифа, Санкт-Петербург, 2014, ст. 41.

Բոլոր ազգերի մեջ էլ կա հանգուցյալի հոգու համար ճաշկերույթ տալու սովորույթը: Հրեաներն այն անվանում են “հաց սգոյ, բաժակ մխիթարութեան»[1]: Հին հեթանոս ազգերը այդ արարողությունը կատարում էին գերեզմանի մոտ, գինի էին ըմպում և հանգուցյալի բաժինը թափում նրա գերեզմանի վրա, ինչպես արեց Աքիլլեսը Պատրոկլեսի մահվան ժամանակ, Ալեքսանդր Մեծը՝ Դարեհի համար և այլն:

Հոգեհանգստի արարողությունները նկարագրվել են նաև գեղարվեստական գրականության մեջ, որի շնորհիվ հնարավոր է դառնում պատկերացում կազմել նախնական ժամանակներում այդ արարողակարգի մասին[2]:

Ինչպես տեսնում ենք, զարգացած երկրագործություն ունեցող ժողովուրդների դիցաբանության մեջ երկրագործական շատ առասպելներ են նվիրված մեռնող-հարություն առնող աստվածներին՝ Օսիրիս (Հին Ե-

---

[1] **Հ. Վարդան վ. Հացունի,** նշվ. աշխ., էջ 351:

[2] Հոմերոսը այսպես է նկարագրում է Պատրոկլեսի հուղարկավորության ծեսը. «...ձիերով ու կառքերով Պատրոկլեսի մոտ գնալով, ողբանք նրան ու տանք պատիվ մահացյալին.... Իսկ երբ ողբով ու հեծությամբ հագենան մեր սրտերը, այնժամ երիվարներն արձակելով՝ բոլորս մեկտեղ ընթրիք կանենք»: Տե՛ս **Հոմերոս**, Իլիական, Ե., 1987, էջ 419 (այսուհետ կնշվեն միայն էջերը): Սկսվում է ողբը, գունդը ձայնակցում է, նժույգներին երեք անգամ պտտեցնում են աճյունի շուրջը, բազմահառաչ ողբ է սկսում Աքիլլեսը: Այնուհետև նկարագրվում է թաղման ծեսը, թե ինչպես է վառվում թաղման խարույկը 100 ոտնաչափ լայն տարածությամբ, ինչպես է Աքիլլեսը կտրում իր շեկ մազերը և դնում Պատրոկլեսի ձեռքում, և տրոյացի 12 պատանիների, ի վրեժ Պատրոկլեսի մահվան, պարտադրում է նետվել խարույկի մեջ: «Ոտքից գլուխ ամբողջովին ծեփեց մարմինը Պատրոկլի ու շուրջբոլորը շարեց մորթված միսը մեծ-մեծ կտորներով, և զետեղեց դիակի շուրջը յուղ ու մեղրի շատ սրվակներ, փայտակույտի վրա նետեց հսկա ուժով հանկարծակի ահիպարան չորս նժույգներ՝ հառաչելով հոգու խորքից, երկու շներ, տասներկու քաջ տրոյացի զինվորներ, որ խարույկի բոցը լափի նրանց..... Աքիլլեսը ողջ գիշեր իր բաժակով ոսկյա կժից գինին առնում ու հեղում էր գետնի վրա, թրջում էր հողն ու ցույց տալիս Պատրոկլեսի թշվառ հոգուն ...» (էջ 423): Հետո արդեն գինով մարում են խարույկը, աճյունի մոխիրը լցնում ոսկե սափորի մեջ, այն ծեփում երկտակ ճարպով, որ հետո դնեն հողի մեջ և վրան կառուցեն շքեղ դամբարան: Թաղման ծեսը շարունակում է բանակի համար նախատեսված հացկերույթը. «Իսկ Աքիլլեսը նրանց համար սուգի սեղան բացեց առատ: Մեծամարմին ճերմակ ցուլեր թավալվեցին երկաթի տակ, հոտից բերված գառներ բազում, այծեր պարարտ ու պապաջուն, և ճարպալից խոզեր մարմնեղ՝ ձյունասպիտակ ժանիքներով նետվում էին խորովվելով հեփեստոսյան բոցի վրա» (էջ 420): Իսկ վերջում կազմակերպվում են խաղեր և մրցություններ:

գիպտոս), Ադոնիս (Փյունիկիա), Ատտիս (Փոքր Ասիա), Թամուզ (Միջագետք), Դիոնիսոս (Թրակիա, Հունաստան), Արա (Հայաստան): Մարդը սեփական հատկությունները տարածում է բնության առարկաների ու երևույթների վրա՝ դրանց վերագրելով կյանք, մարդկային զգացումներ, հույզեր: Պատմական զարգացման արխայիկ հավաքչության և որսորդության փուլում մարդկային մտածողությունը սահմանափակված է եղել բացառապես զգացական ընկալմամբ, որի օրինաչափ արդյունքն էլ եղել է այն, որ զարգացման վաղնջական այդ փուլում կարևոր նշանակություն է վերագրվել պաշտպանական ֆետիշներին: Բույսերը, պտուղները, բացի իրենց սննդային կենարար հատկանիշներից, օժտվել են նաև ֆետիշական-մոգական հատկություններով: Սակայն մոգական սովորույթներում պաշտամունքի առարկա միայն բուսական սնունդը չէր դառնում: Մարդու առօրյայում մշտապես օգտագործվող մսային կերակուրները նույնպես ծիսական արարողությունների ու դիցապաշտական մտածողության անբաժանելի մասն էին: Հնում "լայնորեն տարածված էր աստծուն մարդու կամ կենդանու տեսքով կամ մարդանման ու կենդանանման հացի ձևով ծիսականորեն ճաշակելու սովորույթը: Այդ վարվելակերպի պատճառները նախնադարյան մարդու համար գաղտնիք չեն: Նա համոզված է, թե կերակրի մեջ մարդու կամ կենդանու միս օգտագործելով՝ ինքը ձեռք է բերում նրա ոչ միայն ֆիզիկական, այլև մտավոր հատկությունները»[1]: Հավատացյալ մարդու պատկերացման մեջ ամրապնդված էր, որ բնությունը ընդունակ է մարդկանց ու կենդանիներին փոխանցելու նրանց կերած սննդի, առարկաների հատկությունները:

Որսորդությամբ ու անասնապահությամբ զբաղվող շատ հին ժողովուրդների մոտ տարածված սովորույթ էր, որ մարդիկ սպանում և ուտում էին իրենց որոշ աստվածությունների՝ մարդկանց ու կենդանիների կերպարանափոխված ձևով: Նախնադարյան մարդու պատկերացմամբ շատ կենդանիներ գերազանցում էին իրեն և՛ ֆիզիկական, և՛ մտավոր կարողություններով, ուստի մարդն այդ կենդանիներին դարձնում էր պաշտամունքի առարկա: Ստացվում էր, որ սնունդ ունենալու բնական անհրաժեշտությունը հակասում էր մարդու կրոնական հավատալիքներին. մի կողմում աստվածությունն էր, որին չէր կարելի վնասել, մյուս կողմում կենդանին էր, որն անհրաժեշտ էր որպես սնունդ: Առաջանում է-

[1] **Ջ. Ֆրեզեր**, Ոսկե ճյուղը, էջ 580:

ին իրար հակառակ պաշտամունքներ. մի դեպքում կենդանուն չէին ուտում, որովհետև նրան երկրպագում էին, մյուս դեպքում նրան երկրպագում էին հենց նրա համար, որ սնվում էին նրա մսով: Այն ցեղերը, որոնք պաշտամունքային կենդանուն խնայում էին, հանդիսավոր որոշ դեպքերում, այնուամենայնիվ, սպանում էին և ուտում, իսկ այն ցեղերը, որոնք ուտում էին պաշտամունքի կենդանուն, նրան սպանելը համարում էին աստծո սպանություն, և ներողություն հայցելով՝ քավում էին իրենց մեղքը՝ քավության հատուկ ծես կատարելով: Կային նաև ցեղեր, որոնք այս երկու պաշտամունքն էլ ունեին:

Այսպիսով, պարզ է դառնում, որ նախնադարյան մարդը, ձգտելով ճաշակել իրեն սուրբ թվացող կենդանու միսը, ցանկանում էր դառնալ այդ կերած աստծո հատկանիշների և ունակությունների տերը: Նույնը, ինչպես նշեցինք, վերաբերում էր հացի աստծուն, որի մարմինը հենց հացահատիկն էր: Նույն ձևով էլ խաղողի հյութը համարվում էր խաղողի որթի աստծո արյունը: Սրանից հետևում է, որ հունական դիցարանի խաղողի որթի աստծուն՝ Դիոնիսոսին նվիրված ծեսերի ժամանակ գինի խմելը սովորական գինարբուք չէր, այլ իր մեջ դիցաբանական խորհուրդ ունեցող արարողություն: Այսինքն՝ ճաշակելով հացը և խմելով գինին՝ մարդիկ սնվում էին աստծո մարմնով և արյունով:

Գինին հին դիցաբանական գլխավոր խորհրդանիշներից է, որը կապվում է պտղաբերության ու արգասաբերության, խրախճանքի ու տոնի հետ, և հաճախ նույնացվում մարդկության արյան հետ: Գինին ըմպելիք է, որ ստեղծվում է արևի ու հողի սուբստանցիաներից, իսկ կարմիր գինին հանդես է գալիս նաև որպես արյան հիպոստաս, որը մարմնավորում է կյանքը: Այս խմիչքը կարևոր և հիմնարար սուբստանցիա է և՛ պաշտամունքային ծեսերում, և՛ կենցաղային արարողություններում[1]:

Սննդի բաղադրիչ ծառայելուց բացի՝ կենդանիները շատ մեծ տեղ են զբաղեցնում նաև դիցաբանական համակարգերում որպես կենդանակերպ տարր. “Դա պայմանավորված է այն դերով ու նշանակությամբ, որ ունեցել են կենդանիները մարդկության զարգացման վաղ՝ որսորդական տնտեսության շրջանում, երբ նրանք հստակ տարանջատված չէին մարդկային խմբերից: Տոտեմ-կենդանիները երկար ժամանակ ծառայել են իբրև արտահայտված պարադիգմա, որն օգտագործվել է որպես

[1] **Мифы народов мира**, т. 1, ст. 440:

մարդկային հասարակության կյանքի և բնության ամբողջության մոդել: Դրանով է բացատրվում այն, որ կենդանիների կերպարները մշտապես օգտագործվել են էպոսներում, առասպելներում, այլաբանական համակարգերում, առակներում, ասացվածքներում»[1]:

Դիցաբանական մտածողության մեջ կենդանիները հանդես են գալիս որպես որոշակի կոդի կրողներ՝ դրսևորվելով թե՛ սննդի, թե՛ մարդկային գործունեության տարբեր ոլորտներում: Նրանք դառնում են նաև ժողովրդական պատումների՝ առասպելների և առասպելականացված հեքիաթների հիմք: Այդ առումով կենդանակերպության կոնկրետ տարրերը դառնում են որոշակի կոդի կրողներ, որոշակի խորհրդանիշներ, որոնք պայմանականորեն նկարագրում են տվյալ իրադրությունը, կեցության տարբեր ոլորտները՝ ստեղծելով անքակտելի շղթա կեցությունից մինչև առասպել՝ կենդանի - բույս - երկիր - երկնային լուսատու - տարերք - եղանակ – աստվածություն, և մի կենդանին դառնում է հավաքական-ընդհանրական կերպար իր ամբողջ տեսակի համար:

Տոտեմական հավատալիքները թույլ են տալիս որևէ մարդկային խումբ կապել որևէ տոտեմ-աստվածության հետ, որևէ տարածքի հետ, ներկան կապել անցյալին, մշակույթն ու սոցիալականը՝ ընտանիքին, և վարքի նորմերի ընդհանուր համակարգով միավորել մարդկանց մի ողջ կոլեկտիվ: Տոտեմ-նախնիները՝ իբրև նախնական աստվածություններ, ներկայանում են որոշակի կենդանու տեսքով, որին նվիրվում են տարբեր ծեսեր՝ նպատակ ունենալով ներազդելու տոտեմի վրա:

Այսպիսով, տոտեմ կենդանիները դիցաբանական մտածողության համակարգի կարևորագույն բաղադրիչներից են, որոնք իրենց ամենատարբեր կերպավորումներն են ստանում տարբեր ժողովուրդների մշակույթներում՝ դրսևորելով շատ ընդհանրություններ և նույնանման խորհրդանիշներ՝ հիմք ստեղծելով կրոնական սինկրետիզմի համար: Կենդանիները գլխավոր կերպարներ են և՛ հավատալիքներում, և՛ առասպելներում, և՛ ծեսերում (հոգեհանգստի, զոհաբերության ծեսեր):

Մարդու կերակրացանկում մեծ և կարևոր տեղ է զբաղեցնում ձկնեղենը: Ձկներով հարուստ են եղել հայոց աշխարհի ջրային տարածքները: Հիշատակվում է, որ հայ նախարարները ձկնորսության հանդեպ անտարբեր էին և այն համարում էին անհրապույր և ձանձրալի զբաղմունք,

---

[1] Տե՛ս **նույն տեղում**:

սակայն նրանց սեղաններից մշտապես անպակաս էին ձկների տարբեր տեսակները, ձուկը հարգի էր հատկապես Արշակունիների արքունիքում: Շատ տարածված էին կարմրախայտը և Արածանի գետի այլ ձկնատեսակներ, որոնց խորովում էին կրակի վրա կամ տապակում յուղով, համեմում քացախով ու ոսկեգույն քրքումով[1]:

Այսպիսով, անտիկ կրոններում մարդու հարաբերությունը բարձրագույն էակների հետ և նրանց ծառայելն այնքան է բարդանում, որ անհրաժեշտ է դառնում աստվածների երկրպագության մեջ ներառել զոհաբերություններ: Դրա հիմքում ընկած էին հին երկրագործ ժողովուրդների ագրարային պաշտամունքի, բերքի-հունձքի հետ կապված նյութական պահանջմունքներն ու տնտեսական գործունեությունը, դրանց հետ կապված ժողովրդական հավատալիքները:

Ի մի բերելով կրոնական տոները, ծեսերը, բերքահավաքի ժամանակ կատարվող կրոնական պաշտամունքը, կարևորվում և առանձնակի արժևորվում է այդ պաշտամունքի կենտրոնական բաղադիչը՝ զոհաբերությունը: Ընդ որում՝ զոհաբերությունները տարբեր կրոններում համապատասխանել են տվյալ հասարակության տնտեսական կյանքին և ունեցվածքային հարաբերություններին: Նախնական ժողովուրդների մոտ զոհերը եղել են արյունոտ, անարյուն, կենդանիներ, բույսեր, մրգեր, միս, հաց, ցորեն, գինի, կարագ, անուշահոտություններ: Այն կրոնական գիտակցությունն ու հոգեբանությունը, որ առաջին հերթին անհրաժեշտ էր պարբերաբար սնել-կերակրել աստվածներին, պայմանավորված էր զոհաբերության միջոցով աստվածության հետ հաղորդակցության մեջ մտնելու մտայնությամբ: Ուստի, կրոնական պատկերացումների և հավատալիքների ձևավորմանը զուգընթաց՝ մարդը սնունդն օժտել է սակրալ-սիմվոլիկ բովանդակությամբ: Իր հերթին էլ դավանաբանական դոգմաները, հացկերույթի, ծեսերի ավանդությունները մեծ ազդեցություն են ունեցել սնունդի վերաբերյալ այս կամ այն պատկերացման ձևավորման վրա: Ժամանակի ընթացքում հանդես են եկեղել որոշակի ծեսեր, որոնց կատարմամբ մարդը ձեռք է բերել նաև իր կրոնամշակութային պատկանելությունը, ինքնությունը: Որպես մարդկային գոյության կենսափիլիսոփայական հիմք՝ սնունդը ձեռք է բերել պատմամշակութային, կրոնաձիսական իմասնավորումներ:

---

[1] Տե՛ս **Հ. Վարդան վ. Հացունի,** Ճաշեր եւ խնճոյք հին Հայաստանի մեջ, էջ 214:

Բանալի բառեր *– սնունդ, պաշտամունք, խնջույք, զոհաբերություն, ծես, ավանդություն, սննդային տաբու, սիմվոլ:*

ЕДА КАК КЛЮЧЕВОЙ КОМПОНЕНТ КУЛЬТА

Гоар Саргсян

Ключевые слова*: еда, культ, пир, жертвоприношение, ритуал, традиция, табу на еду, символ*

Статья посвящена вопросам роли, значения еды и связанных с ними религиозных верований, освещения культа и оценки в истории общества.

С этой точки зрения во всех культурах еда является неотъемлемой частью религиозно-ритуального комплекса, в частности культа, поскольку с ней связаны различные верования с их сакрально-символическими проявлениями. И, обусловленная ими, эта проблема становится актуальной в контексте современных социокультурных преобразований, со своей систематизирующей функцией, а также на сакрализованно-социализированном уровне. При таком подходе более чем очевидно, что религиозно-культовые, историко-культурные аспекты еды и трапезы отражают мотивы этнос-мать, земля-плодородие, национального бытия, традиций, эстетики и этикета. И все это способствует идентификации религиозно-национальной принадлежности.

Начиная с периода охоты и собирательства, определенные продукты растительного и животного происхождения приобрели значение религиозного кода (пшеница, хлеб, яблоки, яйца и т.д.), и им приписывались защитные, магические, фетишистские качества.

Обобщая, можно сделать вывод, что пища, как компонент культа, неся печать общественно-исторического развития, обусловливается пониманием человека-бога-природы-общества, а также мотивами смерти-возрождения-плодородия. Таким образом, ежедневный прием пищи как основа человеческого существования, стала компонентом культа и ритуала, сакральным символом, действующим лицом мифов и сказок. Формировались также табу на еду, связанные с отказом от опасной пищи, поощрялась сдержанность и умеренность в потреблении пищи.

FOOD AS AN ESSENTIAL COMPONENT OF WORSHIP

Gohar Sargsyan

Key words: *food, worship, feast, sacrifice, ritual, tradition, food taboo, symbol.*

The article is dedicated to the role, significance of food in the history of society and to the issues of religious beliefs, interpretation and evaluation of worship

related to them. From that perspective, to its being as an integral part of religious ritual complex, specifically of worship in all cultures since various beliefs with their symbolic- sacral manifestations are related to them. Based on the above-mentioned, this issue is relevant today due to its modern social cultural metamorphoses, its integrating, consolidating function, as well as its sacralised, socialized levels. With this approach, it is more than evident that the religious-worshipping and cultural-historical aspects of food and feast reflect ethnos- motherland- fertility motives, national existence, traditions, esthetics and etiquette. And all these contribute to the identification of cultural- national affiliation/belonging. Starting from hunter gatherer era, some plant-based and animal-based foods have gained religious codes values (wheat, bread, apple, egg, etc.) and protective, magical, fetishist features have been attributed to them. To summarize, it can be deduced that the food as a part of cult undergoing social historical development, has been stipulated by human being-god-nature-society concepts, as well as by death-renaissance-fertility motives. Thus, the food is the base of human being, part of cult and feast, sacral symbol, character of myths and fairytales. Food taboos have also been created based on refusal of dangerous food, as well as restraints and self-control in food consumption have been encouraged.

Գոհար Սարգսյան *– փիլ. գիտ. թեկն., ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի Կրոնի պատմության և տեսության ամբիոնի դոցենտ*

Гоар Саргсян *– канд. фил. наук, доцент кафедры Истории и теории религии ЕГУ Факуль¬тета Богословия*

Gohar Sargsyan *– PhD in Philosophy, Associate professor of chair of History and Theory of Religion*